

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/6

15 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Էկո Ատոմ» ՍՊԸ դիմում-գանգատը 2012 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

«Էկոատոմ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ (այսուհետ հարկային տեսչություն) 2014 թ-ի ապրիլի 1-ին ծանուցել է «Էկո Ատոմ» ՍՊԸ-ին այն մասին, որ վերջինս հիմնավորի 2012 թ-ին իր ԱԱՀ վճարող համարվելու փաստը ներկայացնելով համապատասխան փաստաթղթերի պատճեններ, կատարել օրենքի պահանջներից բխող ճշգրտումներ: Ի պատասխան այդ հարցադրմանը «Էկո Ատոմ» ՍՊԸ թիվ 15/14 առ 28.04.2014 թ-ի գրությամբ ներկայացրել է օրենքով հիմնավորված պարզաբանումներ իրեն 2012 թ-ին ԱԱՀ վճարող համարելու վերաբերյալ: Ինչին ի պատասխան, հարկային տեսչությունն իր թիվ 2769տվ, առ 16.06.2014 թ-ի գրությամբ հղում անելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածին, «Էկո Ատոմ» ՍՊԸ-ին հայտնել է, որ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործունեությունը կարող են գանգատարկվել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին կամ բողոքարկվել դատարան:

Հաշվի առնելով վերը շարադրվածը ներկայացվում է «Էկո Ատոմ» ՍՊԸ 2012 թ-ին ԱԱՀ վճարող համարելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությունից բխող հետևյալ պարզաբանումները:

1. Տվյալ դեպքում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվել է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու (հանդիսանալու, հաշվառվելու) վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պահանջ, որը «Էկո Ատոմ» ՍՊԸ հարկային մարմին 2012 թ-ի հունվարի 18-ին ներկայացված «Որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին» հայտարարությամբ բովանդակային առումով կատարել է: Ընդ որում, և՛ ձև 71. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին», և՛ «ձև 84. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ» հայտարարությունների ստացման արդյունքը նպատակային առումով նույնն է: Այն է՝ ՀԱՇՎԱՌԵԼ, ՀԱՄԱՐԵԼ կամ ՃԱՆԱԶԵԼ Հայտարարություններից որևէ մեկը ներկայացրած ընկերությանը Ավելացված Արժեքի Հարկ վճարող:

2. «Էկո Ատոմ» ՍՊԸ կողմից «Որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին» հայտարարությունը հարկային մարմին ներկայացվել է դեռևս 2012 թվականի հունվարի 18-ին: Հայտարարության տրամադրումից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչության կողմից «Էկո Ատոմ» ՍՊԸ-ին տրվել է հավաստագիր առ այն, որ «Էկո Ատոմ» ՍՊԸ-ն 01.01.2012 թ-ից մինչև 2012 թ-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ հարկային մարմնում հաշվառված է որպես ավելացված արժեքի հարկ վճարող: Հետևաբար, «Էկո Ատոմ» ՍՊԸ-ն վարչարարություն իրականացնող մարմնի կողմից ստացել է որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառված լինելու փաստը հաստատող համապատասխան փաստաթուղթ, որը և հիմք է հանդիսացել ընկերության համար իր հետագա գործունեությունը կազմակերպելու համար, այդ թվում՝ դուրս գրել հարկային հաշիվներ և ներկայացնել ավելացված արժեքի հարկի հաշվարկներ: Ավելին, ընկերությունը հարկային մարմինների կողմից ներառվել է ԱԱՀ վճարողների ցանկում և ՀՀ մնացած տնտեսավարող սուբյեկտները ևս ընկերությանը ճանաչել են որպես ԱԱՀ վճարող:

3. Եթե ընդունենք, որ ընկերությանը տրված հավաստագիրը տրվել է օրենքի խախտմամբ, ապա նույն մարմնի մի ստորաբաժանման սխալի հետևանքով, մյուս ստորաբաժանման կողմից ընկերությանը չեն կարող ծանրաբեռնել լրացուցիչ պարտավորություններով:

4. «Էկո Ատոմ» ՍՊԸ կողմից հայտարարությունը հարկային մարմին ներկայացվել է դեռևս 2012 թ-ի հունվարի 18-ին: Հարկային տեսչության կողմից ծանուցումը /որով Ընկերությունը հնարավոր է ճանաչվի ավելացված արժեքի հարկ չվճարող/ կազմվել է 2014 թ-ի ապրիլի 1-ին: Եթե այնուամենայնիվ ընդունենք, որ Ընկերության կողմից ներկայացվել է Հայտարարության ոչ այն ձևը, որը պետք է ներկայացվեր ԱԱՀ վճարող համարվելու համար, ապա հարկային տեսչության Ծանուցումը հայտարարության ներկայացման հաջորդող երկու ամիսների ընթացքում կազմվելու և ծանուցելու դեպքում, ընկերությունը կարող էր օգտվել իր իրավունքից և ներկայացնել «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ» ճշտված ձևը: Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ ԱԱՀ վճարող համարվող հայտարարությունների տվյալների ճշտության ստուգման ժամանակային սահմանափակում չկա, ուստի Ընկերությունը համարում է, որ հայտարարությունների տվյալների ճշտության ստուգման ժամանակահատվածը մինչև հարկային մարմինների կողմից Ընկերությանը որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին հավաստագրի տրամադրման ժամկետն է, քանի որ այն տնտեսավարողի համար անցում է ավելի պարզ հարկման մեխանիզմից ավելի բարդին և հանգեցնում է վճարվող հարկերի ավելացմանը:

5. ՀՀ գործող օրենսդրությամբ միայն ԱԱՀ վճարող համարվելու համար է տնտեսավարող սուբյեկտը ներկայացնում հայտարարություն, որի հիման վրա էլ տնտեսավարող սուբյեկտը կարող է դառնալ, համարվել, հաշվառվել որպես ԱԱՀ վճարող, հետևաբար «Էկո Ատոմ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտարարությունը հետապնդել է միայն մի նպատակ, դառնալ, համարվել, հաշվառվել որպես ԱԱՀ վճարող և Ընկերության կողմից կատարվող գործողությունները պետք է դիտարկել միայն այս տեսանկյունից: Այլապես, Ընկերության կողմից ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ներկայացնելը պատճառաբանված չի և անտրամաբանական է, հետևաբար հարկային մարմինների կողմից այն ընդունելը ևս:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է Հանձնաժողովին հիմնավորված ճանաչել «Էկո Ատոմ» ՍՊԸ-ի 2012 թ-ին ԱԱՀ վճարող լինելու փաստը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Էկո Ատոմ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 18.01.2012 թ-ին ներկայացվել է հայտարարություն «Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին»: Նշված հայտարարության ներկայացմամբ «Էկո Ատոմ» ՍՊԸ-ն 01.01.2012 թ-ից մինչև 31.12.2012 թ-ն իրեն համարել է ԱԱՀ վճարող, ինչը, սակայն, չի ընդունվել Շենգենյան շրջանի կողմից, քանի որ ԱԱՀ վճարող համարվելու համար վերոգրյալ հայտարարության փոխարեն ընկերության կողմից պետք է ներկայացվեր հայտարարություն «ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ»:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմին հայտնի չեն, հարկային մարմինն ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Մինևույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, Հանձնաժողովը գտնում է, որ «Էկո Ատոմ» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

«Էկո Ատոմ» ՍՊԸ դիմում-գանգատը 2012 թ-ի ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ